



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 մայիսի 2021 թվականի N 308-Ա

**ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ «ՀԱՅՔԱՐ» ԱՐՏԱԴԱՐԱԿԱՆ
ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության N286 որոշումով հաստատված կարգի 44-րդ կետի «ը» ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության օգտակար հանաժոնների արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակաման թույլտվություն N° ՇԱԹ -29/615 (տրված 20.01.2020-ին) և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2021 թվականի մայիսի 18-ի N 42-Ա որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող, ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր հասցեում գտնվող 9485.1 քմ մակերեսով հողամասն առանց մրցույթի, վարձակալության իրավունքով, 49 տարի ժամկետով, տրամադրել «ՀԱՅՔԱՐ» ԱԿ-ին՝ տարեկան 40000 (քառասուն հազար) ՀՀ դրամ վարձավճարով:
2. «ՀԱՅՔԱՐ» ԱԿ-ի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման:
3. Վարձակալության պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզի տարածքային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ



2021թ. մայիսի 24
ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 մայիսի 2021 թվականի N 309-Ա

**ԿԱՐԵՆ ՄԽՈՅԱՆԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

1. ՀՀ Տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Կարեն Մխոյանը, հանդիսանալով գույքահարկ վճարող օբյեկտ, իրավահարաբերության պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2021 թվականի ապրիլի 26-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ օբյեկտիվ քննության արդյունքում բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտը ընդունելու հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Տաշիրի համայնքապետարանի ֆինանսական, հաշվապահական հաշվառման, եկամուտների գանձման և հավաքագրման բաժնի կողմից տրված և իրավահարաբերության պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող ՀՀ Ոստիկանության ՃՈ կողմից տրամադրված փոխադրամիջոցների հաշվառման և գնահատման տվյալների՝ քննարկվող շարժական գույքը Տաշիր համայնքի քաղաք Տաշիր, թաղամաս 7, փողոց Աբովյան, տուն 14 հասցեում հաշվառված ՄԵՐՍԵՂԵՍ-ԲԵՆՑ E280 մակնիշի, 18SU199 հերթական համարանիշի փոխադրամիջոցը հանդիսանում է քաղաքացի Կարեն Մխոյանի սեփականությունը, որը իրավահարաբերության պահին գործող «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: Նշված գույքի համար 2013-2020 թվականներն ընկած ժամանակահատվածի համար վճարման ենթակա գույքահարկը կազմում է 568.373 (հինգ հարյուր վաթսուներեք հազար երեք հարյուր յոթանասուներեք) ՀՀ դրամ, ինչը 2013-2020 թվականներն ընկած ժամանակահատվածում չի վճարվել:

Քաղաքացի Կարեն Մխոյանի կողմից նշված ժամանակահատվածի համար գույքահարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 164.777 (հարյուր վաթսունչորս հազար յոթ հարյուր յոթանասունյոթ) ՀՀ դրամի չափով:

2021 թվականի ապրիլի 26-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2021 թվականի մայիսի 23-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է քաղաքացի Կարեն Մխոյանը (հիմք՝ փոստային անդորրագիր 17.05.2021):

Կարեն Մխոյանը չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն իրավահարաբերության պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով նշված օրենքի երրորդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար սույն օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Համաձայն իրավահարաբերության պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և համամասնությամբ, գույքահարկի գումարը վճարվում է համայնքի վարչական տարածքում հաշվառված փոխադրամիջոցների համար հարկվող օբյեկտի հաշվառման վայրի համայնքի բյուջե:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է՝ տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.04 տոկոսի չափով:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի գանձումը:

Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ, ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ, 447-րդ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Քաղաքացի Կարեն Մխոյանից հօգուտ Տաշիր համայնքի բյուջե գանձել 568.373 (հինգ հարյուր վաթսունութ հազար երեք հարյուր յոթանասուներեք) ՀՀ դրամ՝ որպես մինչև 2013-2020 թվականներին Տաշիր համայնքի քաղաք Տաշիր, թաղամաս 7, փողոց Աբովյան, տուն 14 հասցեում հաշվառված ՄԵՐՍԵԴԵՍ-ԲԵՆՅ E280 մակնիշի, 18SU199 հերթական համարանիշի փոխադրամիջոցի համար վճարման ենթակա

գույքահարկի գումար,որից 403.596 (չորս հարյուր երեք հազար հինգ հարյուր իննսունվեց) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 164.777 (հարյուր վաթսունչորս հազար յոթ հարյուր յոթանասունյոթ) ՀՀ դրամ՝ որպես պարտականությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տաշիր համայնքի ղեկավարը:

5. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման մասին օրենքով սահմանված կարգով իրազեկման հաջորդ օրվանից:

6. Գույքահարկը պետք է վճարվի ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275081025 հաշվարկային հաշվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Է.ԱՐՇԱԿՅԱՆ



2021թ. մայիսի 24
ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 մայիսի 2021 թվականի N 310-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՔՆՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ
ՕՐԻՆԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՅՎԱԾ ԴՈՒՌԸ ՕՐԻՆԱԿԱՆ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Ահարոն Վլադիմիրի Խաչատրյանի (անձնագիր՝ AR0329082, տրված՝ 30.05.2017-ին) 2021 թվականի մայիսի 18-ի ՄԴ-233-21 դիմումը, անշարժ գույքի իրավունքի պետական գրանցման թիվ 08072019-06-0034 վկայականը, ԱԶ «ԼԻԼԱՐՄԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից կազմված շինությունների հատակագիծը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշուման 8.1-րդ, 10-րդ, 11-րդ, 18-րդ կետերը, հաշվի առնելով այն, որ Տաշիր քաղաքի 06-008-0103-0025 կադաստրային ծածկագրով 0,08 հա հողամասի վրա օրինական կառուցված շինությունում ինքնակամ բացված դռան պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինքնակամ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների խախտումներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, թաղամաս 5, Երևանյան փողոց, թիվ 192 հասցեում (կադաստրային ծածկագիր՝ 06-008-0103-0025) գտնվող քաղաքացիներին ընդհանուր համատեղ բաժնային սեփականության իրավունքով պատկանող 0,08 հա հողամասի վրա օրինական կառուցված շինությունում ինքնակամ բացված դռան ճանաչել օրինական՝ համաձայն ներկայացվող շինությունների հատակագծի և բնութագրի:

2. Պարտավորեցնել ինքնակամ բացվածքն իրականացնողներին սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Տաշիր համայնքի (900275081124 հաշվեհամրին), բյուջե վճարել ինքնակամ բացված դռան օրինականացման համար սահմանված վճարը՝ 10000 (տասը հազար) ՀՀ դրամ:

3. 60-օրյա ժամկետում սահմանված գումարի չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2021թ. մայիսի 24
ք.Տաշիր

Է. ԱՐՇԱԿՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.iori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 մայիսի 2021 թվականի N 311-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Սույն թվականի մայիսի 31-ին հրավիրել Տաշիր համայնքի ավագանու հերթական նիստ հետևյալ օրակարգով՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2021 թվականի մայիսի 31-ի հերթական նիստի, օրակարգը հաստատելու մասին:
2. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր քաղաքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման, էներգաարդյունավետության և ջերմաարդյունավետության բարձրացման» սուբվենցիոն ծրագիրը հաստատելու մասին:
3. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի Լեռնահովիտ բնակավայրի խմելու ջրի ջրամբարի կառուցում» սուբվենցիոն ծրագիրը հաստատելու մասին:
4. «Տաշիր համայնքի աղբի կոնսերվացում» սուբվենցիոն ծրագիրը հաստատելու մասին:
5. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր քաղաքի փողոցների լուսավորության ցանցի ընդլայնում և արդիականացում նոր էներգաարդյունավետ տեխնոլոգիաների միջոցով» սուբվենցիոն ծրագիրը հաստատելու մասին:
6. «Գյուղտեխնիկայի ձեռքբերում» սուբվենցիոն ծրագիրը հաստատելու մասին:
7. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի Սարատովկա և

Կաթնառատ բնակավայրի փողոցների նորոգում սալարկմամբ» սուբվենցիոն ծրագիրը հաստատելու մասին:

8. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 14-ի N24-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

9. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող հողամասերը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Է. ԱՐՇԱԿՅԱՆ



2021թ. մայիսի 24
ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մայիսի 2021 թվականի N 312-Ա

**ԱՆՀԱՏ ԶԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԱՆԺԵԼԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ
ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Անժելա Հայրապետյան»-ի 2021 թվականի մայիսի 25-ի N49 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45 -րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և ՀՀ կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գ. Լեռնահովիտ, Հրապարակ 6 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Անժելա Հայրապետյան»-ի հայտը բավարարել և նրան տալ 2021 թվականի երկրորդ եռամսյակի համար ոգելից, ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



2021թ. մայիսի 25
ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մայիսի 2021 թվականի N 313-Ա

**ՀՈՂՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽՈԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021
ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի N67-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին պարբերության 1-ին մասով, 7-րդ հոդվածի 4-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, 42-րդ և 43-րդ հոդվածներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասով, 37-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետը, 50-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը հաստատելու մասին» N1034-Ն որոշումով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշումով հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետը, ԱԶ «Արտյոմ Սաքանյան»-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող, 06-008-0022-0003 կադաստրային ծածկագրով բնակավայրերի հողեր նպատակային նշանակության խառը կառուցապատման 0,025 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել բնակավայրերի հասարակական կառուցապատման նշանակության:

2. Հողամասին տրամադրել ՀՀ Լոռու մարզ Տաշիր համայնք, ք. Տաշիր, 1-ին թաղամաս, Երևանյան փողոց, թիվ 25/11 փոստային հասցե:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի 2021 թվականի փետրվարի 9-ի «Հողամասի գործառնական նշանակությունը փոխելու մասին» N 67-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Է. ԱՐԵԱԿՅԱՆ



2021թ. մայիսի 25

ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.ori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մայիսի 2021 թվականի N 314-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմով հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետը, 50-րդ կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող, 06-008-0278-0001 կադաստրային ծածկագրով, 0.15665 հա նոր նշանջացող գույքին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, 14-րդ թաղամաս, Լճափնյա փողոց, թիվ 1/4 փոստային հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ



2021թ. մայիսի 25
ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.iori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մայիսի 2021 թվականի N 315-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմով հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետը, 50-րդ կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող, 06-008-0278-0001 կադաստրային ծածկագրով, 1.50909 հա նոր նախաձեռնող գույքին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, 14-րդ թաղամաս, Երևանյան փողոց, թիվ 355/5 փոստային հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ



2021թ. մայիսի 25
ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մայիսի 2021 թվականի N 316-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶ, ՀԱՄԱՅՆՔ ՏԱՇԻՐ, ՔԱՂԱՔ
ՏԱՇԻՐ, ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 50 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 06-008-0031-0008
ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ
ԷԴՈՒԱՐԴ ՀԱՅԿԱԶԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով քաղաքացի Էդուարդ Հայկազի Սուքիասյանի (ծնված՝ 12.07.1957-ին) լիազորված անձ Նորայր Մարգարի Բաղդասարյանի (անձնագիր՝ AP0604474, տրված՝ 22.10.2016-ին, 039-ի կողմից) դիմումը (մուտք՝ 25.05.2021-ի, ՄԴ240-21), «Արտյոմ Սաքանյան» ԱԶ-ի կողմից կազմված հողամասի և շինությունների հատակագծերը, 24.12.1984-ին կնքված առքուվաճառքի պայմանագիրը, Տաշիրի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 1987 թվականի հոկտեմբերի 2-ի քաղվածքը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43 հոդվածով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, 50-րդ կետով, նկատի ունենալով, որ տան կառուցապատման և սպասարկման համար օրենքով հատկացված 864.6 քմ հողմասի վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված և ինժինեռատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ և այն, որ շինությունները կառուցվել են 1991 թվականին՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրենքի ուժով ճանաչել Էդուարդ Հայկազի Սուքիասյանի սեփականության իրավունքը Լոռու մարզի, համայնք Տաշիր, քաղաք Տաշիր, Երևանյան փողոց, թիվ 50 հասցեում գտնվող (կադաստրային ծածկագիր՝ 06-008-0031-0008) բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական հատկացված 864.6 քմ հողամասի նկատմամբ:

2. Հողամասի սահմանային չափերը որոշվում են Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Ճանաչել Էդուարդ Հայկազի Սուքիասյանի սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի 06-008-0031-0008 կադաստրային ծածկագրով տնատիրության սպասարկման համար անհրաժեշտ 864.6 քմ մակերեսով հողամասի վրա կառուցված բոլոր շինությունների նկատմամբ՝ համաձայն «Արտյոմ Սաթանյան» ԱԶ-ի կողմից կազմված շինությունների բնութագրի:
4. Տնատիրությանը ՀՀ Լոռու մարզ, ք. Կալինինո, Կիրովի փողոց, թիվ 50 հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, թաղամաս 1, Երևանյան փողոց, թիվ 50 բնակելի տուն հասցեն:
5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Է. ԱՐՇԱԿՅԱՆ



2021թ. մայիսի 25

ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.ori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մայիսի 2021 թվականի N 317-Ա

**ԱՐՄԵՆՈՒՀԻ ԹԵԼՄԱՆԻ ՌԱՖԱԵԼՅԱՆԻՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշումով և հիմք ընդունելով քաղաքացի Արմենուհի Թելմանի Ռաֆաելյանի դիմումը (մուտք՝ 25.05.2021-ի. ՄԴ-241-21)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արմենուհի Թելմանի Ռաֆաելյանին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, համայնք Տաշիր ք. Տաշիր, 6-րդ թաղամաս, Զահուկյան փողոց, թիվ 25/1 հասցեում գտնվող հեղամասում կառուցված խանութի շահագործման թույլտվություն:
2. Արմենուհի Թելմանի Ռաֆաելյանին՝ ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081207 հաշվեհամարին մուծել 10000 (տասը հազար) ՀՀ դրամ տեղական վճար՝ շահագործման թույլտվության համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ



2021թ. մայիսի 25
ք. Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մայիսի 2021 թվականի N 318-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 06-008-0101-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ
ԾԱԾԿԱԳՐՈՎ ՏՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՕՖԻՍ ԱԼԵՔՍԱՆԻ
ՄԱՐԴՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Օֆիկ Ալեքսանի Մարդյանի 21.05.2021-ի ՄԴ 238-21 դիմումը , ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2019թվականի դեկտեմբերի 06-ի ԼԴ3/0315/02/19 քաղաքացիական գործով վճիռը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, 43-րդ հոդվածով, « Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանած անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 1-ին և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով, 50-րդ կետով: Հաշվի առնելով , որ հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և այն, որ հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի առաջացնում սերվիտուտ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ճանաչել Օֆիկ Ալեքսանի Մարդյանի սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, 5-րդ թաղամաս, Խանջյան փողոց, թիվ 5 (կադաստրային ծածկագիր՝ 06-008-0101-0007) հասցեում գտնվող 0.1376 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:
2. Հողամասի սահմանները որոշվում են Տաշիր համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Ճանաչել Օֆիկ Ալեքսանի Մարդյանի սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, 5-րդ թաղամաս, Խանջյան փողոց, թիվ 5 (կադաստրային ծածկագիր՝ 06-008-0101-0007) հասցեում գտնվող տնատիրության սպասարկման համար անհրաժեշտ 0.1376 հա մակերեսով հողամասի վրա գտնվող

բոլոր շինությունների նկատմամբ՝ համաձայն «Արսեն Իսահակյան Ռուդիկի» ԱԶ-ի կողմից կազմված հատակագծի:

4. Տնատիրությանը տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, 5-րդ թաղամաս, Խանջյան փողոց, թիվ 5 փոստային հասցեն :

5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



2021թ. մայիսի 25
ք.Տաշիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.ori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մայիսի 2021 թվականի N 319-Ա

ՀԱԿՈՐ ՄԽՈՅԱՆԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Հակոբ Մխոյանը, հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, իրավահարաբերության պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2021 թվականի ապրիլի 26-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչակազմի վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ օբյեկտիվ քննության արդյունքում բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտը ընդունելու հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Տաշիրի համայնքապետարանի ֆինանսական, հաշվապահական հաշվառման, եկամուտների գանձման և հավաքագրման բաժնի կողմից տրված և իրավահարաբերության պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող ՀՀ Ոստիկանության ՃՈ կողմից տրամադրված փոխադրամիջոցների հաշվառման և գնահատման տվյալների՝ քննարկվող շարժական գույքը Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, թաղամաս 7, փողոց Աբովյան, տուն 14 հասցեում հաշվառված ԴԱՅՄԼԵՐ ԲԵՆՏ մակնիշի, 41SS432 հերթական համարանիշի փոխադրամիջոցը հանդիսանում է քաղաքացի Հակոբ Մխոյանի սեփականությունը, որը իրավահարաբերության պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: Նշված գույքի համար 2011-2020 թվականներն ընկած ժամանակահատվածի համար վճարման ենթակա գույքահարկը կազմում է 172.305 (հարյուր յոթանասուն երեք հարյուր հինգ) ՀՀ դրամ, ինչը 2011-2020 թվականներն ընկած ժամանակահատվածում չի վճարվել:

Քաղաքացի Հակոբ Մխոյանի կողմից նշված ժամանակահատվածի համար գույքահարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 52.305 (հիսուներկու հազար երեք հարյուր հինգ) ՀՀ դրամի չափով:

2021 թվականի ապրիլի 26-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2021 թվականի մայիսի 25-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է քաղաքացի Հակոբ Մխոյանը (հիմք՝ փոստային անդորրագիր 17.05.2021):

Հակոբ Մխոյանը չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն իրավահարաբերության պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով նշված օրենքի երրորդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար սույն օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Համաձայն իրավահարաբերության պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և համամասնությամբ, գույքահարկի գումարը վճարվում է համայնքի վարչական տարածքում հաշվառված փոխադրամիջոցների համար հարկվող օբյեկտի հաշվառման վայրի համայնքի բյուջե:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.04 տոկոսի չափով:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի գանձումը:

Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ, ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ, 447-րդ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Քաղաքացի Հակոբ Մխոյանից հօգուտ Տաշիր համայնքի բյուջե գանձել 172.305 (հարյուր յոթանասուներկու հազար երեք հարյուր հինգ) ՀՀ դրամ՝ որպես մինչև 2011-2020 թվականներին Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, թաղամաս 7, փողոց Աբովյան, տուն 14 հասցեում հաշվառված ԴԱՅՄԼԵՐ ԲԵՆՑ մակնիշի, 41SS432 հերթական համարանիշի փոխադրամիջոցի համար վճարման ենթակա գույքահարկի

գումար,որից 120.000 (հարյուր քսան հազար) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 52.305 (հիսուներկու հազար երեք հարյուր հինգ) ՀՀ դրամ՝ որպես պարտականությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տաշիր համայնքի ղեկավարը:

5. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման մասին օրենքով սահմանված կարգով իրազեկման հաջորդ օրվանից:

6. Գույքահարկը պետք է վճարվի ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275081025 հաշվարկային հաշվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Է. ԱՐՇԱԿՅԱՆ



2021թ. մայիսի 25
ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մայիսի 2021 թվականի N 320-Ա

**ԱՐԹՈՒՐ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՊԱՀԱՆՋ
ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. ՀՀ Տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Արթուր Գասպարյանը, հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, իրավահարաբերության պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2021 թվականի ապրիլի 26-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ օբյեկտիվ քննության արդյունքում բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտը ընդունելու հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Տաշիրի համայնքապետարանի ֆինանսական, հաշվապահական հաշվառման, եկամուտների գանձման և հավաքագրման բաժնի կողմից տրված և իրավահարաբերության պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող ՀՀ Ոստիկանության ՃՈ կողմից տրամադրված փոխադրամիջոցների հաշվառման և գնահատման տվյալների՝ քննարկվող շարժական գույքը Տաշիր համայնք, Սարատովկա, փողոց 1, տուն 2 հասցեում հաշվառված ISUZU RODEO 3.2 մակնիշի, 260S281 հերթական համարանիշի փոխադրամիջոցը հանդիսանում է քաղաքացի Արթուր Գասպարյանի սեփականությունը, որը իրավահարաբերության պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: Նշված գույքի համար 2015-2020 թվականներն ընկած ժամանակահատվածի համար վճարման ենթակա գույքահարկը կազմում է 151.422 (հարյուր հիսունմեկ

հազար չորս հարյուր քսաներկու) ՀՀ դրամ,ինչը 2015-2020 թվականներն ընկած ժամանակահատվածում չի վճարվել:

Քաղաքացի Արթուր Գասպարյանի կողմից նշված ժամանակահատվածի համար գույքահարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 31.276 (երեսունմեկ հազար երկու հարյուր յոթանասունվեց) ՀՀ դրամի չափով:

2021 թվականի ապրիլի 26-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2021 թվականի մայիսի 25-ին հրավիրվել են վարչական վարույթի խումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է քաղաքացի Արթուր Գասպարյանը (հիմք՝ փոստային անդորրագիր 17.05.2021):

Արթուր Գասպարյանը չի ներկայացել վարչական վարույթի խումներին:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն իրավահարաբերության պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով նշված օրենքի երրորդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար սույն օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Համաձայն իրավահարաբերության պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և համամասնությամբ, գույքահարկի գումարը վճարվում է համայնքի վարչական տարածքում հաշվառված փոխադրամիջոցների համար հարկվող օբյեկտի հաշվառման վայրի համայնքի բյուջե:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.04 տոկոսի չափով:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի գանձումը:

Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ, ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ, 447-րդ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Քաղաքացի Արթուր Գասպարյանից հոգուտ Տաշիր համայնքի բյուջե գանձել 151.422 (հարյուր հիսունմեկ հազար չորս հարյուր քսաներկու) ՀՀ դրամ՝ որպես մինչև 2015-2020 թվականներին Տաշիր համայնք, Սարատովկա, փողոց 1, տուն 2 հասցեում հաշվառված ISUZU RODEO 3.2 մակնիշի, 260S281 հերթական համարանիշի փոխադրամիջոցի համար վճարման ենթակա գույքահարկի գումար, որից 120.146 (հարյուր քսան հազար հարյուր քառասունվեց) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 31.276 (երեսունմեկ հազար երկու հարյուր յոթանասունվեց) ՀՀ դրամ՝ որպես պարտականությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:
2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տաշիր համայնքի ղեկավարը:
5. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման մասին օրենքով սահմանված կարգով իրազեկման հաջորդ օրվանից:
6. Գույքահարկը պետք է վճարվի ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275099019 հաշվարկային հաշվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ



2021թ. մայիսի 25
ք.Տաշիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մայիսի 2021 թվականի N 321-Ա

ԻՆԵՍԱ ՊՈՊՈՅԱՆԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

